Հասցեատեր՝
«Շիրակ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ rouben.hakobyan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.05.2025թ.

Զեկուցող (անդամ)	Հենրիկ Խաչատրյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՊԼ-155
Խախտում՝	1. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Ուռուշանյանի (28746) կողմից մրցավարի հասցեին հայհոյելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ) 2. «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Սուրեն Սիմոնյանի (559) կողմից անվայել վարքագիծ և ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 3. «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից մրցավարի հասցեին հայհոյանքներ հնչեցնելը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ) 4. «Անցանկալի անձ» հայտարարված Արարատ Հարությունյանի կողմից անհարգալից արարքներ իրականացնելը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ)
Առաջնություն՝	Fastex Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Գանձասար» - «Շիրակ», 17.05.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Ուռուշանյանին (28746) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 17-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Սերյոժա Ուռուշանյանի (28746) նկատմամբ փորձաշրջան սահմանել 5 (հինգ) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 17-ը ներառյալ: Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի

4-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

2. «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Սուրեն Սիմոնյանին (559) որակազրկել 5 (հինգ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 17-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Սուրեն Սիմոնյանի (559) նկատմամբ փորձաշրջան սահմանել 5 (հինգ) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 17-ը ներառյալ: Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:
3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 3-րդ կետը՝ համակցել սույն վարույթի 3-րդ և 4-րդ կետերով նկարագրված կարագապահական խախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցները և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ 400,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը նախագահող՝

Հենրիկ Խաչատրյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված

համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: